

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԴԵԻՈՆԴ՝ ԱԼԻԾԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ,
ԳՐԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Դեռոնգ Ալիշանը ժԹ. դարի երկրորդ կեսի այն եզակի մտաւորականներից է, որը շուրջ իր կէսդարեայ գրական, գիտական հրապարակախօսական եւ մանկավարժական բեղուն գործունէութեան ընթացքում ոչ միայն խորապէս նպաստել է հայ մշակոյթի տարբեր ոլորտների ձեւաւորմանն ու զարգացմանը, այլև նոր գաղափարներով, գեղարուեստական արձակի բնագաւառում ունեցած իր երախայրիքով, ազգային եւ հայրենասիրական ինքնատիպ խնդիրների բարձրացման ու դրանց նորովի մեկնաբանման զրուսերումներով, հայկական ժողովրդական բառուբանի պատմական ու մշակութային դերի ու արժէքի բացայայտումներով, իրաւամբ, դարձել է գրական-գեղագիտական շարժման սկզբնաւորման նահապետը՝ իր ուրոյն եւ արժանայարգ տեղը գրադեցնելով ազգային գիտութեան ու գեղարուեստական գրականութեան հարուստ անդաստանում:

Ալիշանը (Քերովրէ Ալիշանեան) ծնուել է Կ. Պոլսում 1820թ. յուլիսի 10-ին նշանաւոր հնագէտ-գրամագէտ Պետրոս Ալիշանեանի տոհմիկ գերդաստանում*։ Սկզբնական կրթութիւնը

* Պետրոս Ալիշանեանի կրտսեր որդին՝ Սերովրէ Ալիշանեանը (1822-1903թթ.) մասնագիտութեամբ գրամագէտ էր։ Կրթութիւնը ստացել է Վենետիկի Ս. Ղազար Մայրափանքի ընծայարանում։ Դրամագիտութեան ասպարէզում խորանալու նպատակով 1845 թուականին մեկնել է Ամերիկա, 1848 թուականին վերադարձել է Կ. Պոլիս եւ որպէս հմուտ գրամագէտ մեծ անուն եւ հուշակ է ձեռք բերել։ Պարբերական մամուլում նա հանդէս է եկել գրամագիտութեան վերաբերեալ բազմաթիւ յօդուածներով՝ Սերովրէ Պետրոսեան եւ Սերովրէի Ալիշանեան ստորագրութիւններով։ Եղել է եւրոպական մի շարք դրամագիտական ընկերութիւնների անդամ։ Գր. Օտեանի, Մերենցի, Սերուիչենի, Ն. Ռուսինեանի եւ այլոց հետ եռանդուն մասնակցութիւն է ունեցել հայ հասարակական-քաղաքական կեանքում։

1830-1832 թուականներին ստացել է Կ. Պոլսի Չալրխեան վարժարանում: 1832 թուականին հօր կամքով եւ Մկրտիչ Ազեբեանի անձնական ջանքերով կրթութիւնը շարունակել է Վենետիկի Սուրբ Ղազար վանքում: Այստեղ նա յանձնուել է միաբանութեան ներքին ծառայողներից ճեմարանի դաստիարակ Անդրէաս Ծովիզեանին (1769-1849թթ.) «ի դաստիարակութիւն»: Վանքի ճեմարանում Ալիշանը սովորել է 9 տարի՝ 5 տարի նոր ընծայարանում, 4 տարի Բարձրագոյն կրթարանում, որտեղ նա աշակերտել է Ս. Ղազար վանքի ուսուցիչ, օտար լեզուների հմուտ մասնագէտ Միքայէլ Զեմպերեկճեանին (1801-1862թթ.), սովորել է իտալերէն, լատիներէն, յունարէն, ֆրանսերէն, տաճկերէն, իսկ աւելի ուշ՝ գերմաներէն ու անգլերէն լեզուներ: Այս մասին Մխիթարեան ուխտից Բարսեղ Սարգիսեանը գրում է. «Ն. Անդրէաս Ծովիզեանի պէս հոգեկիր վերակացու մ'էր, որ կ'ոռոգէր եւ կը գարդարէր այս չքնաղ պատանույն հոգեւոր պարտէզը: Հայագիտութիւնը կ'արծարծէր ու կը բորբոքէր ուսմանց հետ՝ նոյնպէս հայրենասիրութեան սուրբ հուրը. իսկ Ն. Միքայէլ Զեմպերեկճեանմ՝ հիմնու նոր լեզուներովն ու գեղեցիկ դպրութիւններն, իր բազմապիսի քարգմանութիւններովն ու թատերախաղերովը»¹:

1836 թուականին սքեմաութեան (զգեստաւորութիւն՝ Շ.Ո.) ծիսակատարութեան ժամանակ Ալիշանը անուանակոչուեց հայր Ղեւոնդ, 1838 թուականին (յունուարի 28) դարձաւ ուխտի անդամ, 1840 թուականին (յունիսի 7) ձեռնադրուեց քահանայ, 1845 թուականին ընտրուեց միաբանութեան աթոռակալ, որը վարեց երկար տարիներ:

1841 թուականին Ալիշանն աւարտեց ուսումնառութեան շրջանը եւ նոյն թուականի օգոստոսի 13-ին նշանակուեց Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանի ուսուցիչ, իսկ 1848 թ. մայիսի 30-ին ստանձնեց նոյն վարժարանի տեսչի պարտականութիւնները՝ փոխարինելով Ռաֆայէլ Թրեանցին:

1850 թ. օգոստոսի 29-ին Ալիշանն ազատուեց Ռաֆայէլեան վարժարանի հետ կապուած բոլոր կարգի պաշտօններից եւ անցաւ գիտական, բանասիրական, հայագիտական գործունէութեան: Նա իր պատմաբանասիրական եւ հայագիտական բնոյթի ստեղծագործութիւններով աշխատակցել է «Բազմավէպ»-ին նրա

¹ Ալիշանը ժամանակակիցների յուշերում, գրական յուշերի մատենաշար, է., 1974, էջ 156:

հիմնադրման առաջին իսկ տարիներից: Այսպէս, «Բազմավէպ»-ի 1847 թուականի համարներում Նահապետ ստորագրութեամբ տրպագրուել են նրա հայրենասիրական պաթոսով ստեղծուած երգբանաստեղծութիւնները մաքուր աշխարհարարով:

1849-1851 թուականներին Ալիշանը խմբագրել է «Բազմավէպ»-ը: Ժ.Թ. դարի 50-ականների վերջերին նա նորից է անցել մանկավարժական գործունէութեան: 1858 թուականին՝ իրբեւ Մուրադեան վարժարանի ուսուցիչ, նա գուրծուղուել է Փարիզ, իսկ 1859 թուականին ստանձնել է վարժարանի տեսչի պատասխանատու աշխատանքը եւ այդ պաշտօնը վարել մինչեւ 1861 թուականը:

Ալիշանի տեսչութեան օրօք Փարիզի Մուրադեան վարժարան է այցելել յեղափոխական դեմոկրատ Միքայէլ Նալբանդեանը: Նա մօտիկից ծանօթացել է վարժարանի պատմութեանը, հաղորդակցուել նրա ներքին կեանքին եւ իր քննադատութեանն է արժանացրել այն փաստը, որ բարերար Սամուէլ Մուրադեանի թողած ժառանգութիւնը գլխաւորապէս օգտագործուում է ոչ թէ ազգային կրթութեան ու դպրոցի ընդհանուր գործին, այլ ընդամէնը այն ծառայում է «որպէս մի մասնաւոր առանձնաշնորհութիւն» պապական հայերին: Մխիթարեանների հանդէպ Նալբանդեանի դիրքորոշումը դեռեւս յստակ ձեւաւորուած չէր, այն բարդ էր եւ հակասութիւններով լեցուն, որը պայմանաւորուած էր մի կողմից Վատիկանի կաթոլիկութեան եւ պապականութեան նկատմամբ նրա ունեցած սուբյեկտիւ վերաբերմունքով, իսկ միւս կողմից՝ Ժ.Թ. դարի 50-60-ական թուականներին հայ իրականութեան մէջ ծաւալուող գաղափարական թէժ պայքարի իրարամերժ հակամարտութիւններով: Փորձելով օբյեկտիւ եւ պատմականօրէն ճիշտ մեկնաբանել Մխիթարեանների ազգային-հասարակական դերն ու նշանակութիւնը, նրանց հայագիտական ու պատմագիտական գործունէութիւնը, այսուհանդերձ Մխիթարեանների հետ մտնելով երկխօսութիւնների ու բանավէճերի մէջ, Նալբանդեանը շատ յաճախ թոյլ է տուել սխալներ, իր որոշ բնութագրութիւններում հասնելով ծայրայեղութիւնների եւ խեղաթիւրուած եզրայանգումների: Իր յայտնի «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ»-ում, յետագայում նաեւ՝ «Հիւսիսափայլ»-ում (1858) նա հանդէս է եկել «Մխիթար Սեբաստացի եւ Մխիթարեանք» ծաւալուն յօդուածով, որտեղ ըստ ամենայնի լուսաբանել է միաբանութեան ստեղծման պատմութիւնը, բարձր է գնահատել Մխիթար Սեբաստացու (1676-1749) դերն ու պատ-

մական ծառայութիւնները հայ դպրութեան զարգացման գործում, երբ «բոլորովեցաւ վերստին ի կայծէ, գոր ելոյց Մխիթար Սեբաստացի հանճարեղ մտացն ծննդակաճութեամբ», պատմում նրա լուսաւոր կեանքի ու գործունէութեան մասին «առնա մեծի, որ անձնագրաւ նահատակեցաւ ի լուսաւորութիւն ազգիւն»: Սակայն, այս բոլորով հանդերձ, Նալբանդեանը Սեբաստացուն չի դատում գիտնականների շարքը, նրան չի համարում «մեծ պտղաբեր հեղինակ», միայն այն բանի համար, որ նա հայադիտական, բանասիրական կանոնաւոր կրթութիւն չի ստացել, նրա խօսքերով Սեբաստացին «ցանկացող էր լոկ ուսման եւ ոչ իբրեւ ինքնացեղ ուսումնական»: Ինչ խօսք, Սեբաստացին իր կրթութեամբ զիջում էր իր հանճարեղ աշակերտներին, սակայն չպէտք է մոռանալ, որ նա ի վերուստ ոչ միայն փորձառու դպրոցավար, մանկավարժ ու հրատարակիչ էր, այլեւ հմուտ քերականագէտ ու բառագէտ: Նրա գրչին է պատկանում «Բառագիրք հայկազեան լեզուին» եզակի արժէք ներկայացնող գիրքը, որի առաջարանում, դեռեւս ԺԸ. դարում անուանի գիտնականը անդրադարձել էր աշխարհարարի եւ գրարարի փոխյարաբերութիւնների հարցին: Մինչդեռ Նալբանդեանը զարմանալի լուծեան է մատնում Սեբաստացու սոյն աշխատութիւնը, որտեղ առաջադրուել եւ դիտարկուել են լեզուի հետ կապուած այն բոլոր հարցերը, որոնք այդպէս մտահոգել են «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ»-ի հեղինակին: Սեբաստացու ծննդեան 300-ամեակին նուիրուած յօդուածում Վ. Համազասպեանը յստակ արձանագրում է. «Մխիթարը գիտէր, որ անհնար է գրաբարը դարձնել բոլորի համար հասկանալի լեզու. աւելի հեշտ էր աշխարհաբարը յոկել, նրա համար ստեղծել քերականական կանոններ եւ դարձնել գրական լեզու»²:

Նալբանդեանը բարձր է գնահատել Սեբաստացու յետնորդների՝ պատմագէտ, հայագէտ, բանասէրներ Վրթմանէս Ասքերեանի, Մկրտիչ եւ Յարութիւն Աւզերեանների, Ղուկաս Ինճիճեանի, Միքայէլ Չամչեանի եւ այլոց վրիթխարի աշխատասիրութիւնն ու գործունէութիւնը, որոնց շնորհիւ Մխիթարեան միաբանութիւնը դուրս եկաւ ազգային շրջանակներից եւ ստացաւ միջազգային ճանաչում եւ նշանակութիւն: Այդ շարքում էր նաեւ Ալիշանը, որին անուանի հրապարակախօսը տուել է բարձր գնահատական՝

² Վ. Է. ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ, Մխիթար Սեբաստացի (ծննդեան 300-ամեակի առթիւ), ՀՍՄՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդէս», 1976, N 4, էջ 122-123:

«Այս արժանապատիւ անձը,- գրում է նա,- ծանօթ է հայոց ազգին, մանաւանդ նահապետի անունով: Նորա «Աւագ եւ Փոքր Մասիս», «Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Աւարայրի» տաղերգութիւնքը ջերմացրել են շատ սրտեր նահապետի անունի վրայ. հ. Ղեւոնդ Ալիշանեանցը ունի բանաստեղծական բանեար եւ այդ բանեարը կարող էր աւելի պարզ ու վառ երեւել, եթէ արեղայական սեւաթոյր վերարկուն չլինէր խափանառիք»³:

ԺԹ. դարի 60-ականներն Ալիշանը նորից Ս. Ղազար վանքում էր: 1866թ. մայիսի 11-ից մինչեւ 1872 թ. օգոստոսի 6-ը նա վարել է Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանի տնօրէնի պաշտօնը: Այդ մասին վարժարանի նախկին սան ականաւոր հրապարակախօս Արփիար Արփիարեանը յուշագրում է. «Իմ յիշատակներս Հ. Ալիշանի կեանքին կը սկսին բառորդ դար մը առաջ՝ 1867 թուականի մայիս ամսին, երբ մտայ Ռաֆայէլեան վարժարան: Հոն անցուցած եմ երեք տարիներ ու շրջանաւարտ եղած: Հրապարակագրի կեանքիս մէջ շատ անգամ առիթ ունեցած եմ խօսիլ Վենետիկեան յիշատակներուս վրայ: Ամէն ատեն եւ այժմ ալ, երբ ուզած եմ վերլուծել այն զգացումներն, որոնք սիրտս կը կապեն Ռաֆայէլեան վարժարանին հետ, երբ ուզած եմ փնտռել, թէ ինչու՞ համար այնքան խորին կերպով կը սիրեմ Վենետիկն, աչքիս առջեւ ներկայացած է Հ. Ալիշան, որ Ռաֆայէլեան վարժարանի տնօրէնն էր»⁴:

1872թուականին Ալիշանն ընդհանրապէս թողել է իր մանկավարժական գործունէութիւնը եւ ամբողջովին նուիրուել գրական ու գիտական ընդուն գործունէութեան:

Հայ գրականութեան մէջ նա թերեւս առաջիններից էր, որ գրական-գեղարուեստական իր անառարկելի վարպետութեամբ յաղթահարեց դասական բանաստեղծութեան միջնադարեան քարացած սկզբունքները եւ լայն ճանապարհ հարթեց ուսմանտիրոջ վարդապետան համար՝ ինքն էլ դառնալով այդ ուղղութեան հիմնադիրը հայ գրականութեան մէջ:

Հարուստ է Ալիշանի թողած գիտական ու գրական ժառանգութիւնը, բազմաժանր նրա հետազօտութիւնների շրջանակը՝

³ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ Մ., Ընտիր երկեր, է., 1953, էջ 265:

⁴ Ալիշանը ժամանակակիցների յուշերում, գրական յուշերի մատենաշար, է., 1974, էջ 75:

բանաստեղծ, քերթող, գրականագէտ, լեզուագէտ, մատենագէտ, բուսագէտ, բանահաւաք, ազգագրագէտ, խմբագիր, հրապարակագիր, թարգմանիչ, ուսուցիչ, դպրոցավար եւ այլն:

Ղ. Ալիշանը գրական ասպարէզ մտաւ իրրեւ բանաստեղծ: Հաւատարիմ մնալով Մխիթարեանների տասնեակ տարիների ընթացքում մշակած գիտական ու գրական աւանդոյթներին, սկզբնական շրջանում նա նոյնպէս հանդէս եկաւ գրաբարով գրուած կրօնական ծանրաշունչ թեմաներով: Սակայն դա ստեղծագործական կարճատեւ ընթացք էր: Շուտով նրա ստեղծագործութիւնները գրուեցին մաքուր աշխարհարարով, իսկ որ ամենակարեւորն էր, համահունչ դարձան հայ ժողովրդի ազգային գարթօնքին, ազգային ինքնագիտակցութեան նրա ձգտումներին ու պահանջներին: 1847 թուականին «Քաղմավէպ»-ի համարներում Նահապետ ստորագրութեամբ տպագրուեցին նրա հայրենասիրական բնոյթի երգերը՝ «Պլպուլն Աւարայրի», «Հրազդանը», «Մասիսու սարերը», «Վերջին երգ վիրաւոր բամբուհարին», «Աշոտ Երկաթի ծովուն Սեւանայ», «Շուշանն Շաւարշանայ», «Ողբամ գբեզ Հայոց աշխարհ» եւ այլն, որոնք դարձան Ալիշանի բանաստեղծական արուեստի անգին գոհարները: Դրանք նորամուծութիւններ էին, նոր խօսք ու երանգ Մխիթարեանների մինչալիշանեան երգերում ու քերթուածքներում: Վանական կրօնական գրական աւանդոյթներով կաղապարուած բանաստեղծական մշակոյթը հիմնովին պէտք է քանդուէր, վերակառուցուէր. դժուարին մի գործ, որ վերպահուած էր Ալիշանին: Որ՞ն էր ելքը. դրա համար կար բարդ, միաժամանակ նախընտրելի մի ճանապարհ՝ բանաստեղծութիւնը ժողովրդական դարձնելու ալիշանեան պատկերացումները, որոնք հիմնիվեր փոխեցին երգ-բանաստեղծութիւնների ձեւաբովանդակային կառուցուածքը՝ դրանց հաղորդելով նոր տոնայնութիւն, իմաստնութիւն եւ փիլիսոփայական խոհականութիւն: Սա էր Ալիշան ստեղծագործողի արտերեւոյթը, նրա բանաստեղծելու ֆենոմենը: Ալիշանի գրչի տակ աշխարհարար լեզուն դարձաւ զգացմունքների արտայայտման լուսագոյն կերպ, սրտի, հոգու եւ մտքի հրաշալի թարգման: Ժողովրդական բանահիւսութիւնը՝ այդ անսպառ դանձարանը, դարձաւ Ալիշանի ոչ միայն բանաստեղծական տաղանդի սնուցող հիմնական աղբիւրը, այլեւ հանդիսացաւ նրա ստեղծագործութիւնների առաջատար ուղեւիշը: Նա ոչ միայն հետազօտեց եւ հատիկ առ հատիկ հաւաքեց՝ նախ «Քաղմավէպ»-ում, յետոյ նաեւ առանձին տպագրութեամբ հրատարակեց «Հայոց երգք ուսմկականք» ժողովածուն (1852թ.), որտեղ խնամքով գետեղրուած են ժողովրդական երգերի

ընտրանին՝ անգլերէն ու ֆրանսերէն թարգմանութիւններով հանդերձ, այլև նախանձելի ջերմեռանդութեամբ եւ անսթղ համարձակութեամբ դիմեց բոլորին՝ պահանջելով եւ յորդորելով զբաղուել ազգային գողտրիկ երգերի, արդէն մոռացութեան հասնող խաղիկների, ժողովրդական աւանդոյթ-սովորոյթների, ծէսերի, նըշանների, ազգային արարողութիւնների հաւաքման, զտման, դասդասման, համակարգման եւ մանրակերտ ուսումնասիրման նուիրական գործով:

Ալիշանը խորապէս համոզուած էր, որ «Ազգասէր մարդն այնչափ համ կ'առնէ այս աւանդութիւններէն, որ ոչ միայն հայրենի ժառանգութեան պէս սիրով կ'ընդունի ու կը պահէ, հապա նաեւ անոնց պակասութիւններուն աջ կը գոցէ եւ ան ոճերը կամ բառերն, որ ականջին խորթ կրնային երևնալ, իրենց քնական ու հարագատ աղուորութեամբը աւելի հաճոյ կ'ըլլան իրեն: Որչափ որ աս խօսքս հշմարիտ է, նոյն չափ ալ փափագելի բան է, որ մեր ազգային՝ ալ ուրիշ բարեկիրթ ազգաց պէս վառուէին ազգային աւանդութեանց սիրովը ու ձեռքերնէն եկածին չափ ջանային հաւաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմութիւններ ու առակներ, ետքը ուրիշներուն ալ հաղորդէին, կամ առանձին տպագրութեամբ եւ կամ ազգային օրագիրներէն մէկուն խրկելով»⁵:

Լէոյի հանճարեղ բնութագրմամբ Ալիշանը հայ իրականութեան մէջ դարձաւ ժողովրդական-հայրենասիրական երգի Նահապետը: Հեռուոր իր վանքից, հեռու հայրենիքի աուօրեայ անցողարձից՝ մեծ բանաստեղծը այդ երգերի միջոցով առնում էր մայր ժողովրդի համն ու հոտը, ներշնչում բանաստեղծական անբացատրելի զգացմունքներով, որի արդիւնքում ստեղծուեցին աննման «Պլպուլն Աւարայրին», գողտրիկ «Հայոց աշխարհիկը» եւ այլ երգեր՝ ջերմ սիրով տաքացրած, անյազ կարօտով կենդանացրած՝ «Գործը կատարուած էր, մեծ գործ: Տաղանդը կատարեց այդ գործը: Հայ բանաստեղծութիւնը այլեւս բառախաղ չէր, հնադարեան փառահեղ դիակ չէր. նա դարձաւ սրտի խօսք, ամէնքին հասկանալի, ամէնքին սիրելի: Նա գնաց երգելու, զարգացնելու, միտք ու խորհուրդ յարուցանելու»⁶:

⁵ ՂԵՒՆՅԻ Ա.ԼԻՇԱՆ, Երկեր, «Սովետական գրող» հրատարակչութիւն, Երևան 1981, էջ 99-100:

⁶ Լեոյ, Երկերի ժողովածու, 9-րդ հատոր, է., «Խորհրդային գրող», 1989, էջ 183:

Ղեկնող Ալիշանը աշխարհագրագետ գիտնական էր, եւրոպական մի շարք աշխարհագրական ընկերութիւնների պատուաւոր անդամ, խորիմաց էր եւրոպական անուանի գիտնականներ Ա. Հումբոլդի⁷, Կ. Ռիխտերի⁸, էլ. Ռեկլլուի⁹ եւ այլոց աշխատութիւններին, նրանց ստեղծած հին ու նոր ուղեգրութիւններին ու տեղագրութիւններին:

Իր ուսումնասիրութիւնները ընթացքում նա մշտապէս օգտուել է այդ աշխատութիւններից: 1886 թուականին Փրանսիական Ակադեմիայի կողմից Ալիշանը արժանացել է Պատուոյ Լէգիոնի՝ ընտրուելով Ակադեմիայի պատուաւոր անդամ: 1887 թուականին նա ընտրուել է Իտալիայի Ասիական ընկերութեան պատուաւոր անդամ, 1894-ին՝ Մոսկուայի հնագիտական ընկերութեան անդամ, 1897-ին՝ նրան շնորհուել է Ենայի փիլիսոփայական ակադեմիայի պատուաւոր անդամի եւ դոկտորի կոչում¹⁰:

⁷ Ալեքսանդր Հումբոլդ (1769-1859 թթ.), գերմանացի նշանաւոր ճանապարհորդ, երկրաբան, բնագէտ-բնախոյր: Իրեն համաշնագէտ գիտնական վաստակել էր «19-րդ դարի Արիստոտէլը» անունը: Յատկապէս արժէքաւոր էր նրա «Ճանապարհորդութիւն նոր աշխարհի տրոպիկական մարզերով» 30 մեծադիր հատրներէից բաղկացած անաւարտ աշխատութիւնը (1807-1834 թթ.) եւ «Կոսմոս» խորագիրը կրող 4 հատորեակը (1845-1857 թթ.): Այս գրքերում հարուստ տեղեկութիւններ կան նաեւ Կովկասի մասին:

⁸ Կարլ Ռիխտեր (1779-1859 թթ.), գերմանացի անուանի աշխարհագրագէտ, ակադեմիկոս, 1820-ականներից մինչեւ իր մահը դասախօսել է Բեռլինի համալսարանում, պատմական աշխարհագրութեան պրոֆեսոր էր: Բազմաթիւ աշխատութիւնների հեղինակ է, յատկապէս գիտական արժէքաւոր աշխատութիւն է «Ասիայի հողագիտութիւնը» 5 հատորից կազմուած գիրքը, որ տեղ կարեւոր տեղեկութիւններ կան նաեւ Կովկասի մասին:

⁹ Էլիզ Ռեկլլուի (1830-1905 թթ.), Փրանսուհի, աշխարհագրագէտ, պետական-քաղաքական գործիչ: Եղել է Փրանսիական յեղափոխութեան (1848 թ.) եւ Փարիզի Կոմունայի (1871 թ.) ակտիւ մասնակից: Հեղինակ է «Նոր համընդհանուր աշխարհագրութիւն» (1876-1894 թթ.) 19 հատորից կազմուած աշխատութեան: Գրքում արժէքաւոր տեղեկութիւններ կան նաեւ Հայաստանի պատմական աշխարհագրութեան վերաբերեալ:

¹⁰ Ալիշանի թեկնածութիւնը առաջարկել ու պաշտպանել է գերմանացի հայագէտ-բանասէր Հենրիխ Գելցերը (1847-1906 թթ.): Հայագիտութեան համար արժէքաւոր են նրա «Փաւստոս Բուզանդ կամ հայիական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն» (Վենետիկ, 1896 թ.) եւ «Հետազոտութիւն հայ ղիպարանութեան» (Անդ., 1897 թ.) աշխատութիւնները:

ԺԹ. դարի 50-ական թուականներից սկսած Ալիշանը ձեռնամուխ եղաւ Պատմական Հայաստանի բոլոր 15 «աշխարհների» (հետեւաբար նաեւ 191 դաւառների (մասին պատմաաշխարհագրական հետազոտութեան տիտանական գործին: Նրա նախնական մտայղացմամբ հետազոտութիւնը պէտք է կազմէր 15-20 մեծագիր հատորներ եւ կրէր «Համապատում» խորագիրը: Այս վիթխարի նախաձեռնութիւնը Ալիշանը չհասցրեց ամբողջովին իրագործել: Նա հրատարակեց միայն «Շիրակ» (Վենետիկ, 1881թ.), «Միսուան»¹¹ (Անդ., 1885թ.), «Այրարատ» (1890թ.) եւ «Միսական» (1893թ.) չորս «աշխարհների» մասին աշխատութիւնները, որոնք երբեք իրենց արդիականութիւնը չկորցնող գիտական հանձարեղ կոթողներ են հայագիտութեան հարուստ գանձարանում: Այս մասին հետաքրքիր դիտարկում ունի Գրիգոր Խալաթեանցը՝ «Գուցէ սակաւուց (քչերին՝ Շ. Ո.) յայտնի է, որ Հ. Ղեւոնդ իւր բոլոր երկասիրութիւնները Հայաստանի մասին գրել է առանց երբեւէ այդ աշխարհը տեսնելու. ծովածիծաղ Վենետիկի Ս. Ղազարում նստած՝ նա սլացել է մտնով եւ երեւակայութեամբ դէպի Հայաստան նա ուսումնասիրել է այդ երկրի բնական եւ քաղաքական (հին ու նոր) աշխարհագրութիւնը այնպէս մանրամասն եւ հիմնովին, որքան միայն հնար է. նա հաւաքել է Հայաստանում երբեւէ գտնուած բոլոր արձանագրութիւնները եւ որքան ջերմ արցունքներ է թափել հայի անցած-գնացած օրերի, հայ աւերակների վրայ»¹²:

Ալիշանը ԺԹ. դարի երկրորդ կէսի հայ երիտասարդ սերունդի պաշտելին էր: Նրա սքանչելի երգ-բանաստեղծութիւնները մշտապէս նրանց շրթերին էին: Երիտասարդութեան համար Ալիշանի գրքերը սուրբ մասունքներ էին, իսկ նրա պատմաաշխարհագրական գրքերով նրանք գիտելիքներ ստանալու հետ մէկտեղ դաստիարակուել են, սովորել են ճանաչել ու սիրել Հայաստան Աշխարհը:

Ալիշանի բանաստեղծական արուեստի ջերմ երկրպագուններից էր անուանի հրապարակախօս եւ գրականագէտ Գրիգոր Օտեանը: Իր ժամանակի հայ բանաստեղծների մէջ, իրաւամբ,

¹¹ Վենետիկի Միսիթարեաններն իրենց աշխատութիւնները՝ նաեւ «Միսուանը» հրատարակել են խոշոր գրամատէր, բարեգործ Մկրտիչ Սանասարեանի (1818-1890 թթ.) միջոցներով:

¹² Ալիշանը ժամանակակիցների յուշերում, գրական յուշերի մատենաշար, է., 1974, էջ 13:

Օտեանի կուռքը Ալիշանն էր՝ իր վիպական քերթուածքներով եւ անաղարտ աշխարհարարով գրուած հոգեգմայլ տաղերով: Ալիշանի «Տիրունի»-ն Օտեանի մշտական ուղեկիցն էր, նրա գրպանի գիրքը: Այդ մասին Հր. Ասատուրն իր նշանաւոր յուշագրում պատմում է մի հետաքրքիր միջադէպի մասին, երբ 1866-ին Միդհաթ փաշայի յանձնարարութեամբ Օտեանը Ռուսիոյի գահաժառանգ Կարոլոս իշխանին Վառնայից ուղեկցում էր դէպի Ռուսչուգ. «Երբ երկաթուղիի գնացքը Ռուսնուէի կայարանը կը հասնի,- պատմում է յուշագիրը,- իշխանին հետեւորդները իսկոյն վար կ'իջնեն վակոններէն, իսկ Կարոլոս հինգ վայրկեանի չափ կ'ուշանայ: Այս յապաղումին Օտեան տեղի տուած էր ակամայ: Վառնայէն նամբայ ելլելէ ետքը, միջոց մը խօսակցած էր գահաժառանգին հետ: Երբ նիւթերը սպառէր էին, նահապետի «Տիրունի»-ն գրպանէն հանելով՝ սկսեւ էր կարդալ: Իշխանը ուզած էր հասկնալ, թէ ի՞նչ է կարդացածը եւ ինք խօսած էր անոր հայ բերթողին վրայ, որուն մէկ բանաստեղծութիւնը սկսէր էր թերանցի թարգմանել: Ատիկա «Տիրալոյս պատանակն» էր՝ գմայելի հատուած մը, գոր շատ կը սիրէր ինք: Իշխանը հիացումով ունկնդրէր էր: Երբ կառախումբը Ռուսնուգ հասեր էր, թարգմանութիւնը տակաւին չէր աւարտած, եւ Կարոլոս խնդրէր էր, որ վերջացնէ, այնչափ գոհ էր մնացեր: Այդ եղած էր իրենց յապաղման պատճառը»¹³:

Աւ. Իսահակեանը ուսումնասութեան տարիներին, 1901 թ. Վիեննայից գալիս է Վենետիկ նախ Միսիթարեանների հարուստ գրադարանից օգտուելու, Իտալիան ճանաչելու եւ, որ ամենակարեւորն է, Նահապետին տեսնելու եւ նրա աջը համբուրելու ջերմ փափագով: Այդ ուղեւորութեան տպաւորութիւնների մասին անուանի գրողը բանաստեղծի նրբանկատութեամբ գրում է. «Ալիշանը եւ ուրիշները վանում, հին մատենագիրների, մագաղաթների ներշնչումով ստեղծել են մի հոգեկան, գաղափարական Հայաստան եւ ապրում են ու երգում այդ անգոյ հայրենիքում, որպէս իրականութեան մէջ, իրական Հայաստանում: Հայր Ալիշանը՝ նրա ոտները իրական երկրի վրայ էին, իսկ գլուխը հինգերորդ դարում, երազների մէջ առանց նիւթական աչքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսաւ նա դարերի մշուշների մէջ թաղուած Հայաստանը, տեսաւ տարածու-

¹³ Հր. Ա.Ս.ՏՈՒՐ, Գիմաստուերներ, 4. Պոլիս, 1921, էջ 92-93:

թիւններով հեռու վայրեր, այցելեց Հայաստանի ամէն մի կէտը, սիրեց, ապրեց ամէն մի հողի կտորը, շնչաւորեց աւերակները, գգուեց, հիացաւ նրանցով... Հայաստանը ոչ ոք այնպէս չգիտէ, ինչպէս նա, ոչ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասէրը: Իրականութիւնը նրա գրչի տակ երազ էր դարձել եւ երազը՝ իրականութիւն»¹⁴:

Ղ. Ալիշանը բարեկամական եւ՝ նամակագրական լայն կապեր ունէր այդ շրջանի գիտնականների հետ, առանձնապէս մտերմիկ յարաբերութիւններ ունէր գերմանացի աշխարհագրագէտ, Արեւելքի պատմական աշխարհագրութեան հանճարեղ տեսաբան, Բեռլինի համալսարանի պրոֆէսոր Հենրի Կիպերտի (1818-1899 թթ.) հետ, որը յայտնի էր իր գծած «Պատմական Հայաստան» ատլասով:

1881 թուականին վենետիկում կայացաւ աշխարհագրագէտների համաշխարհային երրորդ կոնգրէսը, որտեղ Ալիշանը հանդէս եկաւ «Հայկական աշխարհագրութիւնը» գիտական ճառով: Իր ճառում ընդունում եւ ջերմօրէն պաշտպանում է ԺԹ. դարի 80-ականներին մեծ տարածում գտած այն տեսութիւնը, ըստ որի, մարդկային հասարակութեան զարգացման կարեւոր ազդակներից մէկը աշխարհագրական միջավայրը եւ աշխարհաքաղաքականութիւնն է:

Ղ. Ալիշանը աւելի քան 40 տարի հայոց պատմութեան եւ աշխարհագրութեան համար արժէքաւոր նիւթեր է հաւաքել իր նշանաւոր «Համապատում»-ներում: Նրա հաւաքած տեղեկութիւնների զգալի մասը ամփոփուել ու տեղադրուել են մեծածաւալ «Հայկարան»-ներում, որոնք կազմուած են ութ վիթխարի հատորներից: Իւրաքանչիւր հատորում մի քանի հազար մեծ ու փոքր նիւթեր են տեղադրուած, որոնց մէջ ամբարուած են պատմագիտական, աշխարհագրական, կրօնական, տեղագրական, աշխարհաքաղաքական, կենդանական ու բուսաբանական եւ այս կարգի այլ տեղեկութիւններ ու փաստագրութիւններ, որոնք տարբեր առիթներով անուանի գիտնականն օգտագործել է իր բազմաբովանդակ աշխատութիւնները գրելիս: Այդ մասին հետաքրքիր գիտարկում ունի Մխիթարեաններից Սիմոն Երեմեանը՝ «Իր քաղած տեղեկութեանց մեծ մասը կը բովանդակուէին ստուարահատոր, մեծածաւալ «Հայկարաններու» մէջ. իր ապագայ գրքերու առադաները ասոնց մէջ հաւաքուելու համար,

¹⁴ Նոյն տեղը, էջ 218-220:

միայն իր ուժը եւ իր նիւթական քաջութիւնը չէր քաւեր. միաբանութեան անդամները օգնութեան կը հասնէին. իր դասընկերներէն սկսեալ մինչեւ ուխտիս ներկայ ուսանողները՝ անդադար հայկարաններու համար ընդօրինակած են տեղեկութիւններ, պատմութիւններ, գոր գրչագիր եւ տպագիր գրքերու մէջ կը գտնէր ինքն չայր Ալիշան»¹⁵:

Մեծ է Ալիշանի գիտական ներդրումը նաեւ հայ պատմիչների գրքերի հրատարակման ասպարէզում: Յատկապէս ուշագրաւ է «Սոփերք Հայկականք» գրական մատենաշարի 22 հատորիկները (1853-1861թթ.), որոնք լուսարանում են հայ պատմիչների անտիպ գործերը՝ Վարդան վարդապետի «Հաւաքումն պատմութեան»-ը, Կամենիցի «Լեհաստանի եւ Ռումանիոյ Հայոց տարեգիրք»-ը, «Նշմարք եւ նշխարք Հայաստանին», որտեղ ամփոփուած են Հայաստանի չէնքերի, բնակարանների հին ճարտարապետութիւնը ներկայացնող պատկերներ ու արժէքաւոր ծանօթագրութիւններ: «Ոչ մէկ Հայ,- գրում է Ա. Չոպանեանը, կարելի է ըսել, չէ ցոյց տուած այդքան վիթխարի աշխատասիրութիւն մը՝ այդքան հարուստ ու փայլուն արդիւնքով մը պսակուած: Քսան հոգիի գործ կատարած է Ալիշան իր կեանքի ընթացքին մէջ, ամբողջ մատենադարան մը, ամբողջ աշխարհ մը թողած է մեզի, եւ Հայ պատանիներու համար որ նոր կը սկսին ուսանիլ, զարգանալ ու կազմուիլ, եւ որոնք պէտք ունին իրենց ազգին ու Հայրենիքին վրայ իրենց խօսող տա՛մ ու ազնիւ ձայնի մը, չկայ աւելի կազդուրիչ, աւելի հրահանգիչ ու հրապուրիչ մատենադարան քան այն գոր Ալիշան կանգնած է»¹⁶:

1895 թուականին լոյս տեսաւ Ալիշանի «Հայրուսակ կամ Հայկական բուսարատութիւն» գիրքը, որտեղ հաւաքուել, դասդասուել ու գիտական լուսարանման են արժանացել հայոց բնաշխարհի աւելի քան 3400 բոյսեր ու ծաղկատեսակներ՝ 150 պատկերազարդ նկարներով: «Հայրուսակ»-ը գիտական արժէք ունի նաեւ այն առումով, որ ներկայացնում է բոյսերի ու տեսակների հայկական անուանումների ընդարձակ ցուցակ՝ հարուստ ծանօթագրութիւններով¹⁷:

¹⁵ Նոյն տեղը, էջ 117:

¹⁶ Ա. Չոպանեան, Դեմքեր, հ. 1, Փարիզ, 1924, էջ 91:

¹⁷ Սոյն գրքի վերաբերեալ «Ծայրիկ» պարբերականում քննադատական յօդուածներով հանդէս են եկել Արշակ Չոպանեանը եւ Նորայր Բիւզանդացին: «Աշ-

Նոյն թուականին հրատարակ իջաւ Ալիշանի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» աշխատութիւնը (Վենետիկ 1895թ.), որը նախապէս հատուած առ հատուած տպագրուել է «Բազմալէպ»-ում, որից յետոյ լոյս է տեսել առանձին տպագրութեամբ՝ կազմուած 522 փոքրադիր էջերից: Գրքը գրուած է աշխարհաբարով, պարզ ու մատչելի ոճով: Հրատարակութիւնը կատարուած է ինամքով, մաքուր ու գեղեցիկ: Գրքի մէջ դրուած են 10 պատկերներ: «Հին հաւատք»-ը ստեղծուել է մեծ գիտնականի համբերատար ու տքնաջան աշխատանքի շնորհիւ: Նա հաւաքել եւ ժամանակագրական կարգայնութեան հաշուառումով գիտական անթերի մշակուածութեան է հասցրել այն բոլոր տեղեկութիւնները Հայոց Հին հեթանոսական կրօնի մասին, որոնք սփռուած են եղել հայ եւ օտար պատմագրութիւններում եւ մատենագրութիւններում: Գրքի վերաբերեալ ընդարձակ գրախօսականով հանդէս է եկել Լէոն, մասնաւորապէս, մատնանշելով «հետեւեալը՝ «Տաղանդաւոր գիտնականը, ինչպէս եւ իր միւս գործերի մէջ ցոյց է տալիս մի գարմանալի աշխատասիրութիւն. նա հաւաքել է այն բոլորը, ինչ որ գրի միջոցով հաղորդուած է ժողովրդի հաւատալիքների, աւանդութիւնների մասին եւ գեղեցիկ ու հմտալից բացատրութիւններ է տուել նրանց: Նա կարողացել է որոշել, թէ ինչ տեսակ պաշտօն էին մատուցանում հին հեթանոսական ժամանակներում քնութեան, երկնքի լուսատուներին, կենդանիներին, հրէշներին, ոգիներին, դիցազուններին»: *Ընդունելով, որ Հին Հայաստանը հաւանաբար հետեւել է պարսկական մագղեգական կրօնին, Ալիշանը մի առանձին գլուխ նուիրել է Ձենդ-աւեստային, փորձել է ամփոփ ձեւով ներկայացնել պարսկական կրօնի էութիւնը, աւելուքները, պաշտամունքները: «Դա մի աշխատութիւն է, գրում է Լէոն,- որի նմանը մինչեւ այժմ չի եղել մեր մէջ:*

խտութիւնը կատարեալ պիտի ըլլար,- գրում է *Չոպանեանը,*՝ երբ այս գեղեցիկ հաւաքածոն ընկել յետոյ՝ պատմական, ուղեւորական, բառահաւաքական գործերու մէջ գտնուած բոլոր բուսական հայ բառերուն, հեղինակը հաւաքածոն գրպանը դնէր ու կ'երբաբ գաւառները եւ անոնց նշտութիւնն ստուգէր ժողովրդին բերնէն իսկ՝ ուր անոնք կենդանի են դեռ: Գործը այսպիսով ոչ միայն անբաւական եղած է, այլ բոլոր սխալներովն ալ լեցուն, որոնք անխուսափելի են այս տեսակ աշխատութեանց մէջ, աղբիւրներէն իսկ փոխ առնուած սխալներ եւ նոյնիսկ ձեռագիրներէ սխալ ընդօրինակութեան սխալներ...» (*Տես՝ Մարդիկ, 4. Պոլիս, 1895, թիւ 10, յուլիս 1, էջ 368*):

Մանաւանդ հետաքրքիր են այն համեմատութիւնները, որ անում է հեղինակը Զենդ-աւեստայի եւ մեր լեզուի քառերի մէջ»¹⁸ :

Ալիշանի գիտական վիժխարի ժառանգութեան ուսումնասիրութեան եւ նրա բազմաժանր գիտական գործունէութեան շըրջանակներից յանիրաւի դուրս է մնացել մանկավարժական գործունէութեան բնագաւառը, առ այսօր ուսումնասիրուած չեն նրա մանկավարժական հայեացքները, լուսարանուած չեն մանկավարժական բնոյթի նրա ստեղծագործութիւնները, ըստ ամենայնի ներկայացուած չէ Մուրադ Ռաֆայէլեան վարժարանում նրա ծաւայած կարճ, սակայն բեղուն ուսուցչական գործունէութիւնը: Ալիշանը իրրեւ ուսուցիչ եւ դպրոցավար մնացել է միայն իր ժամանակակիցների եւ իր պաշտելի սաների յիշողութիւններում եւ յուշագրութիւններում: Կարծում ենք, որ Ալիշանի մանկավարժական հայեացքների լուսարանում վաղ թէ ուշ կը գտնի իր արժանի հետազոտողին, որը ոչ միայն կը լրացնի ու կ'ամբողջացնի նրա գիտական գիմանկարը, այլեւ մի նոր եւ իմաստալից կողմով կը բացայայտի հայ ժողովրդի Նահապետին՝ իրրեւ մանկավարժ, ուսուցիչ, դաստիարակ եւ դպրոցավար:

Արդ, բացի գրական, գիտական եւ հոգեւոր գործունէութիւնից Ալիշանը գրադուել է նաեւ ուսուցչական գործունէութեամբ: Իր կեանքի երկու տասնամեակները նա նուիրել է դըպրոցին, պատանիների դաստիարակութեան ու կրթութեան հայապահպանման գործին: 1841-1850, 1858-1861, 1866-1872 թուականները Ալիշանի ուսուցչական գործունէութեան տարիներն են, երբ նա եռանդուն աշխատանք է ծաւայել վենետիկի Ռաֆայէլեան եւ Փարիզի Մուրադեան վարժարաններում իրրեւ ուսուցիչ, դաստիարակ եւ դպրոցավար: Այս տարիներն Ալիշանի համար կարող էին լինել նաեւ փառքի տարիներ. մի բան, որին նա մնաց անհաղորդ իր ողջ կեանքի ընթացքում: Միաբանութիւնը բազմաթիւ անգամ նրան առաջարկել էր արբահօր պաշտօնը, սակայն նա երրեք շընդունեց այդ առաջարկութիւնը՝ գերադասելով գրադուել իր սիրած գործով: Երբ 1876 թուականի մայիսին վախճանուեց արբահայր Գէորդ Հիւրմիւղեանը, միաբանութիւնը միահամուռ ցանկութիւն յայտնեց Մխիթար արբահօր գահաթուռին տեսնել Ալիշանին: Այս անգամ նոյնպէս նա հրապար-

¹⁸ ԼԷՌՅ, Երկրի ժողովածու, 9-րդ հատոր, է., Խորհրդային գրող, 1989, էջ 31:

րակաւ հրաժարուեց հետեւեալ առարկութեամբ՝ «Գրիչս ձեռքէս մի՛ առէք»:

Իր համեստ, ազնիւ եւ մարդասէր բնաւորութիւնը միահիւսուելով բնատուր տաղանդին, հանճարին, սուր մտքին եւ անվրէպ յիշողութեանը, արարչագործուեց ոչ միայն տաղանդաւոր գիտնականը, բանաստեղծը, մատենագիրը, այլ նաեւ աննման ուսուցիչը, դաստիարակն ու դպրոցավարը:

Յայտնի է, որ Մխիթարեաններն առանձնապէս ուշադրութիւն չեն դարձրել վարդապետ-ուսուցիչների մասնագիտական պատրաստուածութեան վրայ. դա կարելի է բացատրել հետեւեալ կերպ. նախ՝ խուսափել են Փինանսական լրացուցիչ ծախսերից, երկրորդ՝ բաւարարուել են միայն իրենց պատրաստած վարդապետ-ուսուցիչներով: Այդ առիթով «Հայրենիք»-ը գրում է. «... պէտք է սակայն, որ ինքը մասնագետ ըլլայ դպրոցական խնդիրներու մասին, քանի որ իրմէ կը բխի ուղղութիւնը, իր ձեռքով կը կատարուի վերին հսկողութիւնը, ուսումնապետութիւնը եւ այլն: Արդ կրնանք ըսել, որ հատ մը միաբան չի կայ, որ սորված ըլլայ դասաւանդութեան արհեստը, հատ մը չի կայ, որ մանկավարժ ըլլայ»¹⁹: Թէպէտ այս գործում անձնուիրութիւնը, եռանդը, ներքին մղումը կարեւոր գործօններ են, սակայն գլխաւորը մասնագիտական կրթութեան ապահովումն է: Մինչդեռ միաբանութիւնը շատ վարդապետների գործուղել է եւրոպական երկրներ՝ աստուածաբանութեան մէջ կատարելագործուելու նպատակով, կարելի էր այդպիսի քայլ կատարել նաեւ մանկավարժութեան մէջ մասնագիտանալու ուղղութեամբ: Այս դէպքում իրենք բաւարարուել են իրենցով, այսինքն սահմանափակուել են միաբանութեան մանկավարժական փոխանցուող փորձով ու գիտելիքներով:

Այիշանը բնատուր, աստուածաշնորհ մանկավարժ էր. նա իր սաներին տալիս էր ազգային դաստիարակութիւն՝ նրանց միտքն ու հոգին տողորելով հայրենասիրական, ազգասիրական ջերմ զգացմունքներով: Իր շնորհաշատ սաների յիշողութիւններում ու բնութագրութիւններում Այիշանը ներկայացուում է իբրեւ վառ անհատականութիւն եւ խոշոր դէմք Մուրադ Ռաֆայէլեան վարժարանում, որը զգալի ազդեցութիւն է թողել սովորողների բարոյական նկարագրի ձեւաւորման վրայ, առաջին հերթին

¹⁹ Հայրենիք, թիւ 878, յուլիս, Կ. Պուլիս, 1894:

ձգտել է նրանց մէջ ամուր պահել ազգային ոգին եւ հայրենիքի սէրը: Իր յիշողութիւններում Արփիար Արփիարեանը մատնանշում է. «Կը յիշեմ զինքը խոհուն, մտածող, միշտ խորասուզուած իր աշխատութիւններուն մէջ, քայց միշտ սրտի տէր, միշտ յիշող, թէ այդ տղաքներն յանձնուած են իր խնամքներուն, անոնց միտքը, անոնց սիրտն իսկ պիտի կրթէ ու ազնուացնէ եւ անոնց կեանքն ալ, առողջութիւնն ալ իր խնամքներուն յանձնուած են: Եւ ահա, կը մոռնայ անցեալն ալ, պատմութիւնն ալ, ապագան ալ, ամէն ինչ, եւ իր ժամերուն մեծ մասը կը գոհէ այդ տղաքներուն, առանց տրտունջի մը, առանց գանգատի մը, այլ ընդհակառակն, ուրախութեան եւ գոհութեան զգացումներով կը կատարէ ինչ որ ուրիշներուն պարտականութիւնն էր եւ ոչ տեսչին»²⁰:

Ալիշանի ողջ կեանքը կարելի է բացորոշել երեք բառի մէջ՝ Սէր, Երգ, Աղօթք: Նրա սիրոյ աղբիւրը Աստուածն էր ու Հայրենիքը: Սերաստացու նման Ալիշանը նոյնպէս հայրենասէր էր, նուիրեալ եւ ազգասիրութիւնը ներդաշնաւորել էր կրօնական իր համոզմունքներին: Կրօնը Ալիշանի համար նոյնպէս համոզմունք էր, հաւատամք, ազգութիւնը՝ ցեղային պատկանելիութիւն, որ արեան օրէնքով նոյնքան բարձր գաղափարախօսութիւն է, որից դուրս դժուար թէ լինի Ալիշանի պէս վիթխարի անհատականութիւն՝ «Կրօնք եւ ազգասիրութիւն իրարմէ չեմ կրնար բաժանել, խոստովանում է նա, չգիտեմ, թէ ազգատեսաց ո՞ր պէս կրնան մտնել յարկայութիւն մեծ երկնից»: Մակայն «կրօնքի եւ ազգասիրութեան» հետ մէկտեղ նրա սրտում եւ հոգում տեղ են ունեցել նաեւ մանուկները, որոնց հետ երգել ու զուարճացել է հոգեգմայլ ծերունին՝ մոռանալով իր հանճարեղ մեծութիւնը: Հէնց այստեղ պիտի որոնել ու գտնել դաստիարակութեան ալիշանեան արուեստի գաղտնիքները: Մանկութիւնը սիրելով, նրանց անմեղութեամբ հմայուած՝ ինքն էլ սիրում էր մանկանալ՝ վերառաքելու համար իր հոգու եւ մտքի կայծերը: Ահա թէ ինչու Ալիշանը իր հոգու գեղեցկութիւնները, իր հոգեթով զգացմունքները գեղազիտական բարձր վարպետութեամբ շուայօրէն նուիրել է մանուկներին իր նշանաւոր «Նուագքներ»-ում՝ հրատարակելով «Առ մանկունս նորամուտս յաշխարհ», «Օրհնեցէք մանկունք գտէր», «Թոյլ տուք մանկուոյց

²⁰ Ալիշանը ժամանակակիցների յուշերում... էջ 75-76.

գալ առ իս», «Ի մանուկս, գրօսներով ի դաշտի», «Առ Ս. մանուկն Ալոսիոս»²¹ չքնաղ բանաստեղծութիւնները:

Ալիշանի ստեղծագործութիւնները տողորուած են վառ հայրենասիրութեամբ: Նրա ստեղծագործութիւնների եւ բանաստեղծութիւնների ընտրանի հատուածներ արդէն մէկ դարից աւելի է, ինչ մտել են դպրոցական դասագրքերի մէջ եւ դարձել են հայ պատանիների եւ երիտասարդութեան մէջ հայրենասիրութեան եւ ազգասիրութեան ոգի ներշնչելու գլխական գեղեցիկ նմուշներ:

Ալիշանի մանկավարժական, խոհափրիլիսոփայական գաղափարները կրթութեան, դաստիարակութեան, ազգասիրութեան, մարդասիրութեան, ինքնաճանաչողութեան, առաքինութիւնների, ազգային դաստիարակութեան թերութիւնների մասին արտայայտած մտքերն այսօր էլ ունեն արդիական հնչեղութիւն, չեն կորցրել իրենց համն ու հոտը. դրանում համոզում ենք, երբ անդրադառնում ենք նրա «Ամսոց բնական նշանները», «Թէ ով է տղոց ամէնէն սիրելի, զօրաւոր եւ հարկաւոր վարպետը», «Ամենահարկաւոր ուսմունք», «Ծանիր գրեզ», «Ազգային յատուկ դաստիարակութիւն», «Ազգասիրութիւն», «Ազգային պակասութեանց կամ կատարելութեանց վրայ», «Ազգային պակասութիւն մը, որ առաջադիմութեան միջոցները կ'արգելէ» եւ այս բնոյթի նրա միւս իմաստասիրական ու բարոյագիտական յօդուած-գրոցներին, որոնք յաւերժ կը մնան համաժամանակեայ՝ որպէս գարբի հետ քայլող հայրենասիրութեան եւ ազգասիրութեան կենդանի յուշարձաններ:

Միանգամայն իրաւացի էր Եղիա Տեմիրճիպաշեանը, երբ գրում էր. «Ազգային ամենաբարձր հեղինակաց մին է Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, անդամ վեներաբլայ Միփարեան միաբանութեան: Իբրև բանաստեղծ-մատենագիր պայմէն կը գերազանցէ Հ. Արսէն Բագրատունին. իսկ իբր հայրենասէր մատենագիր, այնպեան չունի բոլոր միաբանութեան մէջ: Կը գուշակեմ, թէ կոնակն Հոռոմաց եւ երեսն Արեւիկ, Հայաստան դարձուցած կը նստի վանքին մէջ լուսատեւնչ եւ հայրենատեւնչ Ալիշան...»²²:

²¹ Տե՛ս Ղ. Ալիշան, «Նուագք», հատ. Ա. (Մանկունի), էջ 111, 113, 73, 66, 79:

²² Հատընտիր քննարցումով, ընտանեաց եւ դպրոցաց համար, Մշակ (Ե. Տեմիրճիպաշեան), Կոստանդնուպոլիս, 1880, էջ 19:

ԺԹ. դարի 50-60-ական թվականներին Հայ իրականութեանը բնորոշ են եղել հայրենասիրական, մարդասիրական եւ ազգային-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կեանքը վերափոխել ու նոր դադափարներ, որոնք տարբեր կողմերից շօշափել են ժողովրդի լուսաւորութեան, ազգային ինքնորոշման եւ նրա անկախութեան հարցերը: Հայ առաջադէմ մանկավարժական միտքը չէր կարող յետ մնալ այդ համընդհանուր շարժումից: Ազգային գարթօնքի այդ բեկումնային շրջանում անհաղորդ չմնացին նաեւ հոգեւոր դասի առաջաւոր ներկայացուցիչները, որոնք իրրեւ լուսաւորութեան ջհակիրներ, անհաշտ պատերազմ յայտարարեցին տգիտութեանն ու խաւարին: Այդպիսին էին Ալիշանը, Խրիմեանը, Ներսէս Վարժապետեանը, Կոմիտաս Վարդապետը եւ շատ ուրիշներ:

«Ազգասիրութիւն» յղուածում Ալիշանը շարադրել է իր նկատառումները «ազգ» եւ «ազգասիրութիւն» հասկացութիւնների մասին, որը կարեւոր է ինչպէս նրա հասարակագիտական, սոցիալ-քաղաքական ու փիլիսոփայական հայեացքների բացայայտման, այնպէս էլ ազգային դաստիարակութեան եւ կրթութեան առանձին հարցերի ճիշտ լուսարանման առումով:

Ինչ էր հասկանում Ալիշանը «ազգ» եւ «ազգասիրութիւն» ասելով: Այս հարցադրմանը նա տալիս է պարզ եւ յստակ բացատրութիւն. «Ազգասիրութիւնը երկու բառ է, երկու բան է, կէտը՝ կաւ, կէտը՝ կրակ: ...Ազգն է այս կաւը, ազգն է միութիւն այնքան մարդկանց, որ մէկ նահապետէ մը առաջ եկած են, մէկ հայրենի լեզու ունին, նման բնաւորութիւն ունին եւ շատ հեղ (անգամ՝ Շ.Ո.) նոյն կրօնք, նոյն օրէնք, նոյն վիճակ: Ասոնց պարտքն է, որ սիրեն մէկգմէկ, կամ բոլոր գանձք, որ ազգ բառով կ'իմացուի. այս է ազգասիրութիւնը»:

Ալիշանը համամիտ չէր այն մտածողներին, ովքեր փորձում էին ազգասիրութիւնը հակադրել մարդասիրութեանը, մարդուն՝ հայրենիքին, հայրենիքը՝ աշխարհին՝ յայտարարելով, որ լաւ մարդու համար ողջ աշխարհը հայրենիք է: Ալիշանին խորթ էր աշխարհաքաղաքացիութեան փիլիսոփայութիւնը: Իրեն յատուկ վճռականութեամբ եւ ներքին զայրոյթով յայտարարում էր, որ իր ազգը չսիրողը երբեք մարդասէր չի լինի, քանզի մարդասիրութիւնը ընդհանուր հասկացութիւն է, իսկ ազգասիրութիւնը՝ մասնաւոր, հետեւաբար՝ «Մարդասիրութիւնը կը սորվեցնէ գամէն մարդիկ սիրել, վասնզի մեզի նման են, ազգասիրութիւնը զազգայինները աւելի սիրել կը սորվեցնէ, վասնզի աւելի նը-

ման է մեզի: Ուրեմն մարդասիրութիւնը աւելի կը հաստատէ զազգասիրութիւնը, քան թէ կը վերցնէ... Մեր ընտանիքը եւ բոլոր մարդկութիւնը սիրելու մէջ ալ մէկ աստիճան մը կայ, որ է ազգը: Ուրեմն թէ որ մարդասիրութիւնը պարտք է, եւս առաւել եւ մօտիկ պարտք է ազգասիրութիւնը...: Ըլլանք մարդասէր, բայց չփակչինք շողոփորթի կամ հացկատակի պէս ազգի մը հետեւ ու առնունք անցնինք անոր ըրածը չրածը գրուցելու, խենթութիւններն ալ խելօժութեանցը հետ պաշտելու»²³: Ազգասիրութեան գրեւորման լաւագոյն միջոցը ազգային լեզուն է: Այնտեղ, որտեղ լեզուն մնացել է, դեռ ազգասիրութիւնն էլ կայ, այնտեղ, որտեղ ազգերը բոլորովին լեզուակորոյս են եղել, այնտեղ նաեւ ազգասիրութիւնը բոլորովին կորածի պէս բան է գրեթէ: Սա երկաթեայ օրէնք է, մանաւանդ աշխարհասփիւռ հայութեան համար: Լեզուն ազգային մտածողութեան ձեւ է, արտաքին հայեացքից թւում է, որ լեզուն սովորական, բնական երեւոյթ է, մինչդեռ լեզուի գորութիւնը գերբնական է, արտերեւոյթային է: Անկարելի է, որ Ֆրանսիացին, անգլիացին, գերմանացին եւ այլ ազգեր, նոյն բանը նոյն եւ նման կերպով մտածեն ու բացատրեն. «Թէ որ մէկը իր ազգին լեզուն չգիտնայ, գրում է Ալիշանը, ու օտար լեզու մը իր ծնողացմէ առած բանեցնէ, կրնանք ըսել, թէ այն լեզուին տէրը եղող ազգին նման գաղափարներ կ'ունենայ, քան թէ իր ազգին, անոր համար ալ անտարբեր կամ պաղ կ'ըլլայ իր ազգին վրայ. այս անտարբերութիւնը կը նմանի իլիկն ալանջին, որ քնարին ձայնը եւ կատուին մլաւելը հաւասար կրնայ սեպել: Լեզուն կորսնցնելէ ետեւ եւ մանաւանդ անոր հանդէպ անհոգ ըլլալէն ետեւ մէկալ ազգային սովորութիւնք եւ յիշատակք եւ նշանք շուտով կը կորսուին, ուրեմն ազգասիրութեան մեծ եւ իխստ մեծ օգուտ կ'ընէ ազգին լեզուն»²⁴:

Մարդու եւ հասարակութեան զարգացման գործում դաստիարակութեան եւ կրթութեան դերը ու նշանակութեան հարցերը կարեւոր տեղ են զբաղեցրել Ալիշանի մանկավարժական ստեղծագործութիւններում: Հանգամանօրէն քննութեան առնելով դաստիարակութեան բովանդակութեան, նպատակի ու խնդիրների հիմնահարցերը՝ Ալիշանը զարգացրել է մի շարք ուսանելի ու

²³ Ղեւոնդ Ալիշան, Երկեր, «Սովետական գրող» հրատարակչութիւն, Երեւան 1981, էջ 177, 176, 175:

²⁴ Նոյն տեղը, էջ 184:

հետաքրքիր մտքեր: Նա դաստիարակութիւնը դիտարկում է իր-
րեւ «ժողովրդեան ամէնէն մեծ եւ հարկաւոր բարիքը»:

Դաստիարակութիւնը այն ժամանակ միայն արդիւնաւէտ
կը լինի, երբ դաստիարակուողի պէտքերին պատշաճ եւ բնաւո-
րութեանը համապատասխան տրուի. «Դաստիարակութեան վախ-
եանն ամէն ազգի համար ալ նոյնն է,- գրում է Ալիշանը,-
բայց վախեանին հասնելու միջոցներն կրնան տարբեր ըլլալ
եւ պէտք է, որ ըլլայ, վասնզի ամէն ազգ նոյն մարմին եւ
նոյն արիւն ունի, բայց ոչ նոյն խառնուածք եւ նոյն բնաւո-
րութիւն: Եւ ինչպէս բնական ախորժակք գանազան են մարդ-
կանց մէջ, գանազան են նաեւ բարոյականք, եւ ինչպէս որ
ըստ ախորժակց կը գանազանեմք բնական կենաց սնունդն,
այնպէս ալ գանազանելու է բարոյական կենաց սնունդն, որ է
դաստիարակութիւն կամ կրթութիւն»²⁵:

Ալիշանը չի բացառում այն իրողութիւնը, որ քաղաքակըր-
թութիւնը տարբեր ժողովուրդների մէջ զարգացման տարբեր
աստիճանի վրայ է գտնուում: Ինչպէս Ն. Զօրայեանը, Ալիշանը
նոյնպէս կարծում էր, որ այդ տարբերութիւններն ամենեւին էլ
պայմանաւորուած չեն ժառանգական, կլիմայական եւ աշխարհա-
գրական գործօններով: Զարգացման տարաստիճան մակարդակնե-
րը գլխաւորապէս պայմանաւորուած են ժողովուրդների պատ-
մութեան մէջ տեղի ունեցող պատմական իրադարձութիւններով,
սոցիալ-տնտեսական եւ ազգային-քաղաքական յարաբերութիւննե-
րով եւ այլ գործօններով: Դրանց փոփոխութեամբ եւ առաջադի-
մութեամբ հնարաւոր է փոխել նաեւ դաստիարակութեան եւ կրթ-
թութեան զարգացման ընթացքայնութիւնը եւ հետզհետէ հասնել
զարգացման այն աստիճանին, որին հասել են աշխարհի քաղա-
քակիրթ ժողովուրդները: Բոլոր ժամանակներում էլ եղել եւ ա-
ռաջնային ինդիք է դարձել մշակոյթների եւ գաղափարաբանու-
թիւնների ազդեցութիւնների եւ փոխազդեցութիւնների հարցը:
Գիտութիւնը այս փաստը չի ժխտում: Պետականութիւնը եւ ան-
կախութիւնը կորցրած հայութիւնը, բնականաբար, նոյնպէս հա-
ղորդակից պիտի լինէր այլ ժողովուրդների մշակոյթին, նրանց
կեանքին, աւանդոյթներին եւ սովորոյթներին: Ընդունելով այս
ճշմարտութիւնը՝ այնուամենայնիւ հայ առաջադիմական միտքը
միանգամայն մերժում է մեխանիկական, առանց քննադատական,
ստեղծագործական մօտեցման, չտեղայնացուած, օտարածին փոխ-

²⁵ Նոյն տեղը, էջ 156-157:

առումներն ու ազդեցութիւնները: Այդ մասին Ալիշանն ունէր իր ուրոյն տեսակէտը. «...ամէն ազգ գանազան բնաւորութիւն եւ ազգային ոգի մը ունի եւ ինչպէս գանազան լեզու ունեցող՝ գանազան քացատրութիւն ունին, գրեթէ այսպէս ալ գանազան կերպ ունին ըմբռնման եւ մտածման: Եւ ինչպէս մտածմունքին տարբեր է, այսպէս ալ՝ մտածմունքն հաղորդելու եւ ըմբռնելու կերպն քանի որ այս գանազանութիւնս կայ օտարի կրթութիւնն կամ քիչ կամ ոչինչ կը յաջողի, կամ կըրթուողն իր ազգային ոգին կը կորսնցնէ: Միթէ՞ մեր ազգին խորանշան կերպարանաց գանազանութեան չափ չկայ մեր եւ անոնց ոգւոյն մէջ ալ գանազանութիւն մը, միթէ՞ հայերն, ամէն բան կորսնցնելով, իրենց ազգային ոգին ալ բոլորովին կորուսեր են, որն որ անկարելի է կորսնցնել, քանի որ կայ ազգային լեզու, ազգային աւանդութիւն, ազգային ծես եւ արեւելեան զգացմունք մը»²⁶:

Անուանի գիտնականը հայ ուսուցիչներին եւ դպրոցի պատասխանատու այրերին յորդորում էր օտար կրթութեան փոխարէն պատանիներին ուսուցանել «...գեանապարհ, գոր կոյնեցին աշակերտք Մեսրոպաց եւ Սահակաց եւ Ներսէսի, գորոց գաթոնն ունիք»²⁷: Իր խօսքն ու պատգամները համոզիչ դարձնելու համար նա շատ յաճախ գիմում է նաեւ այլ միջոցներ: Այսպէս գեղարուեստի վարպետութեամբ կերտած իր ստեղծագործութիւնների միջոցով, նա ընթերցողին տանում էր զէպի վշտով ու արցունքով հեղեղուած պատմական անցեալը, ուր հայ ժողովուրդը անդառնալի կորուստների հետ ունեցել է նաեւ յաղթանակի հերոսալի էջեր: Նա մատնանշում էր պատմական այն տխուր փաստերը, երբ օտարները թշնամի դարձած երբեք չեն խնայել հայերին, քանդել են նրա հայոց աշխարհը, բնակեր արել նրա տունն ու շէնը, դարեր շարունակ ժողովրդին մատնել են պանդխտութեան ու գաղթականութեան: Այս հարցում նրա վերջնական պահանջը հետեւեալն էր. «Օգտակար կրթութիւնն պէտք է առնուլ պատուաստի պէս մեր բնութեամբ վրայ, չէթէ մեր բնութիւնն անոր վրայ պատուաստել...: Ուրեմն ազգերնուս յատուկ կրթութիւն տուողն ըլլայ ազգային, օտարներն մեզի կերպեր ցուցնեն. անոնք մեզի լոյս տան, քայց հայու ձեռն

²⁶ Նոյն տեղը, էջ 160:

²⁷ ԵՐԵՄԵԱՆ Հ. Ա., «Հայ միտք», էջ 26:

ըլլայ ջահակիրն, դժուարին այեաց մէջ մեզի ծովացոյց ըլլան, քայց նահապետն մեզնէ ըլլայ»²⁸:

Ի շարս բազմաթիւ հարցերի Ալիշանը անդրադառնում է նաեւ ազգային դաստիարակութեան թերութիւնների բացայայտման եւ դրանք ծնող պատճառների պարզարանման խնդիրներին: Որո՞նք են ազգային դաստիարակութեան թերութիւնները եւ դրանք ծնող պատճառները: ԺԹ. դարի 40-50ական թուականներին, երբ զգալի տեղաշարժեր էին կատարուել լուսաւորութեան ու կրթութեան ոլորտում, այսօրինակ հարցադրումը մանկավարժութեան մէջ սկզբունքային նշանակութիւն ունեցող հիմնահարց էր, որին տարբեր աւիթներով եւ տարբեր մեկնարանութիւններով անդրադարձել են այդ շրջանի առաջադէմ մտածողները: Այս հարցին ծաւալուն մեկնարանութիւններով անդրադարձել է նաեւ Նիկողայոս Զօրայեանը՝ 1848 թուականին հրատարակելով «Նըկարագիր ազգային դաստիարակութեան կամ ազգային դաստիարակութեան գլխաւոր թերութիւնները» գիրքը: Ղ. Ալիշանը 1849 թուականին «Բազմավէպ»-ի թիւ 11-ում հանդէս է գալիս «Ազգային պակասութիւն մը, որ առաջադիմութեան միջոցները կ'արգելէ» յօդուածով, որտեղ իրատեսօրէն եւ բոլորովին նոր մօտեցումով եւ այլ տեսանկիւնից է քննարկել դպրոցի եւ ազգային դաստիարակութեան մէջ արմատ ձգած թերութիւնները, մատնանշել դրանց առաջացման պատճառները եւ յաղթահարման ուղիները: Ալիշանի կարծիքով ազգի յետամնացութիւնը ոչ այնքան արտաքին պատճառների, որքան աւելի խոր ներքին պատճառների հետեւանք է. «Վասնզի,- գրում է նա,- հիմայ փորձով կը տեսնամք, որ քանի մը տարիէ վեր ազգերնիս կը ծաղկի, ոչ քաղաքական վիճակը փոխելով եւ ոչ ալ հարստանալով...: Կը մնայ, որ իրմէ ունենայ ներքին պատեառ մը, որ իր կարողութիւնը իր նարտասանութիւնը արգելէ, եւ իր հոգելից ետանդը դարձնէ ուրիշ քանի մը վրայ...: Տաղանդաւոր ազգ մը, ինչպէս մերը, երբ որ քաղաքական եւ քանակական զարգացման անհոգ է, պէտք է, որ իր մտաց եւ ջանքին ուրիշ զբաղմունք մը գտած ըլլայ»: Ուշագրաւ է այն, որ Ալիշանը, լինելով իրապաշտ մտածող եւ ճշմարիտ ազգասէր, ազգային մտածողութեան, ազգային բնաւորութեան եւ հոգեբանութեան մէջ տեղ գտած թերութիւնները չէր գտնում ազգային դաստիարակութեան մէջ առկայ թերութիւններից. դրանք նա դի-

²⁸ ՂԵՒՈՒՆԻ Ա.Լ.ԾԱՆ, Երկեր, Երևան, 1981, էջ 162:

տարկում էր սերտ կապի մէջ: Այս տեսակէտից դաստիարակութեան թերութիւնների առաջացման բուն պատճառներից մէկը նա համարում էր մեզանում արմատացած շափազանց շահասիրութիւնը, գիւրակեցութիւնը՝ հանդերձ կծծիութեամբ «...իր ուժը ծախած է շահու համար, շահը՝ դիւրակեցութեան համար: Ասոնցմով ֆաղափականութիւնը և քանականութիւնը ծաղկեցնել չէ կրցած, վասնզի անոնց միջոցը, որ են ստակ և եռանդն սրտի, ուրիշ քաներու ծախսեր է»²⁹: Այսպէս, Ալիշանը բոլոր չարիքների սկիզբը համարում էր նախանձը, ազահութիւնը, նիւթատենչութիւնը, շահասիրութիւնը, անհանդուրժողականութիւնը, անտարբերութիւնը եւ այլ արատաւոր յատկութիւններ, որոնք յատկապէս ազգակործան են պետութիւն եւ անկախութիւն չունեցող, օտար կայսերապետութիւնների իշխանութեան տակ ապրող ազգային փոքրամասնութիւնների համար: Յայտնի է, որ հայերը մասնաւոր սէր եւ յաջողութիւն ունեն առեւտրի ասպարէզում: Հանրայայտ ճշմարտութիւն է, որ առեւտուրը ոչ միայն տէրութիւնների զարգացման, այլեւ անհատ մարդկանց հարստացման կարեւոր միջոց է նաեւ: Թերեւս սա է պատճառը, որ շատ ազգերի պէս, հայերի համար նոյնպէս վաճառականութիւնը ցանկալի բնագաւառ է եղել: Ալիշանը հիանալի գիտէր այս բոլորը, նա քաջ գիտակցում եւ արժեւորում էր վաճառականութեան դերն ու բերած օգուտները, բայց միւս կողմից էլ լաւ էր տեսնում դրա հակառակ երեսը. «...վաճառականութիւնը մայր բարգաւաճանաց կ'ըսուի, մեզի ի՞նչ բանի մայր եղեր է: ...Հայոց տէրութիւնը բոլորովին վերցուելէն վերջը կէս հազար տարի է հայոց վաճառականութեան տէրութիւնը միշտ բանուկ մնացեր է: Վասնզի վաճառականութեան ֆաղցր աղբեր (աղբիւր՝ Շ. Ո.) քով շահասիրութեան լեղիահամ աղբիւրն ալ վազելով, խառնուեր ջուրը դառնացուցեր է, անարգ շահասիրութիւն մը տիրեր է ձեռաց եւ մտաց»³⁰: Ծահը շահ է բերում. այս սկզբունքն էր գերիշխում: Ալիշանը միանգամայն համամիտ էր յոյն փիլիսոփայ եւ բարոյագէտ Պլուտարքոսի (40-125թթ.) այն մտքին, որ հարստութեան բերած բարեկեցութիւնը առանց հանդիսատեսի ու վկայի վերածւում է ոչնչի, եւ երբ հարստութեան վրայ ոչ ոք չի նայում եւ դրանով չի յափըշտակւում, ապա այն դառնում է կոյր ու մութ, մինչդեռ այլ է

²⁹ Նշ. աշխ., էջ 189-199:

³⁰ Նշ. աշխ., էջ 190-191:

բարեմտութիւնը, փիլիսոփայութիւնը, ճանաչումը այն ամէնի, ինչը շրջապատում է մարդուն եւ նրանից պահանջում է մտքի աշխատութիւն եւ քաղցր յոգնութիւն. «...այս ամէնը, մինչեւ իսկ աննկատ մնալով բոլոր մարդկանցից, լուսաւորում է սեփական լոյսով եւ հոգում ստեղծում է մեծ պայծառացում ու մի բերկրանք, որը մօտ է հոգուն եւ ինքն իրեն, քանզի հոգին ձգտում է բարուն՝ անկախ նրանից տեսնու³¹ է դա որեւէ մէկը, թէ թախուն է մնում բոլոր աստուածներից ու մարդկանցից: Այդպէս են հոգին հրապուրում առափնուփինը, նշմարտութիւնը, մաքեմատիկական գիտութիւնների՝ երկրաչափութեան ու աստղագիտութեան գեղեցկութիւնը...»³¹:

Ալիշանը չէր ընդունում, որ մտաւոր զուարճութիւնների, իմաստութեան ու գիտութիւնների զարգացման հրաւիրակ լինելու փոխարէն զբամը ծառայում էր կամ նոր շահ բերելուն, կամ էլ անցողիկ վայելքներին: Այստեղից էլ սկիզբ են առնում ազգային դաստիարակութեան թերութիւնները: Ալիշանը սրտից ասում էր տեսնում, որ ծնողները չեն գիտակցում կրթութեան իրական արժէքը, թերահաւատ են գիտութիւնների եւ արուեստների հասարակական էափոխիչ դերին: Նրանք կրթութիւնը ընդունում էին այն չափով, ինչ չափով այն նիւթական շահ կը բերէր իրենց գաւակներին, «մի կտոր հացի տէր կը դարձնէր» նրանց: Շատերի մէջ իշխում էր այն մտայնութիւնը, որ գիտութիւնը, կրթութիւնը «հաց չբերեր, գիրն ու գրիչը փոր չեն կշտացնէր»: Ալիշանը երբեք չի կորցրել լաւատեսութիւնը պայծառ գալիքի հանդէպ: Նա խորապէս համոզուած էր, որ այսօրինակ կարծրացած գաղափարները ժողովրդի մէջ ժամանակավրէպ են, քանի որ «Բաւական է թէ նանչնար, որ կրթութենէ պատուական քան չկայ աշխարհիս վրայ, վասնզի ինքն է մարդկութիւն, թէ որ նանչնար, որ անօթութեամբ ապրելէն շատ գէշ է տգիտութեամբ ապրիլը: Տգէտը արդէն մեռած է մտօք, անօթին դեռ կ'ապրի...»: Թող չստեղծուի այն թիւր կարծիքը, որ Ալիշանը ընդհանրապէս դէմ էր արժանավայել ապրելուն, արժանապատիւ եւ յարմարաւէտ կեանքին: Ծիրա է՝ նա հոգեւորական էր, սակաւապէտ, սակայն նաեւ զարմանալի մաքրակենցաղ, կեանքով լեցուն եւ կեանքասէր անձնաւորութիւն էր: Նա քաջ գիտակցում էր, որ մարդու համար «ամենապատուական» բանը, որ տրուել է արարչի կողմից, դա կեանքն է, հետեւապէս թէ՛

31 Պլուտարխոս, Երկեր, Երեւան «Հայաստան», 1987, էջ 569:

շահը եւ թէ՛ նիւթական զանազան միջոցները անհրաժեշտ են կեանքը բարեկեցիկ եւ յուսալի դարձնելու համար: Այսուհանդերձ, «արժանավայել» կեանքը հակադրելով «ղիւրակեցիկ» կեանքին՝ Ալիշանը նախապատուութիւնը տալիս էր ազնիւ քրտինքով վաստակած աշխատանքին, որը մարդկութեան երջանկութեան անհրաժեշտ գրաւականն է:

Սա մարդու եւ ընդհանրապէս մարդկութեան երջանկութեան ալիշանեան վարդապետութիւնն էր: Եւ եթէ կեանքը ճիշտ ձեւով ապրելու փիլիսոփայութիւնը գիտակցուէր բոլորի կողմից, ապա չէին լինի զանազան մոլորութիւններ, դժբախտութիւններ ու ողբերգութիւններ: Բարձրաստիճան հոգեւորականը՝ որպէս հրաւիրակ, իր ժողովրդին պատգամում է. «Հաց ուտելու համար աշխարհ եկանք, մարդկանց դպրոց փոռններն պիտի բլլան եւ դասատու խոզերն պիտի առնունք: Հաց ուտելով որչա՞փ պիտի ապրիս, շատ շատ ութսուն տարի, իսկ հացի տեղ իմաստութիւն շահելով՝ յաւիտենականութիւն մը կ'ապրիս»³²:

Դրանք սին ու դատարկ խօսքեր չէին: Յաւերժութեան եւ յաւիտենականութեան մէջ ապրելու առհաւատչեան հէնց Նահապետ Ալիշանի ապրած գեղեցիկ ու լեցուն կեանքն էր, որը սրբաբարձուեց իր իսկ փառակերտած գիտութիւն, ուսմունք, կրօն, ազգասիրութիւն հանճարեղ միակցութեան իր տիեզերածաւալ եւ խորախորհուրդ անձնաշխարհում:

Ալիշանը դաստիարակութեան համակարգում կարեւոր տեղ էր յատկացնում բարոյական դաստիարակութեանը՝ այն գիտելով որպէս մարդու բարոյական նկարագրի ձեւաւորման անհրաժեշտ պայման: Դաստիարակութեան նպատակը Ալիշանը սահմանում է առաքինութիւնների՝ իբրեւ, «ամենահարկաւոր ուսմունք»-ների դաստիարակութիւն: Բարձրաստիճան հոգեւորականը առաքինութիւնը դասում է «ամենահարկաւոր» գիտութիւնների շարքը եւ ուսուցիչներին ու դաստիարակներին յորդորում է վաղ տարիքից, միւս ուսմունքների հետ մէկտեղ, մանուկներին հաղորդել նաեւ առաքինութեան դասեր: Թերեւս շապերը զարմանան եւ նոյնիսկ չընդունեն, որ Ալիշանը փորձում է առաքինութիւնը մօտեցնել, հաւասարեցնել դպրոցում դասաւանդուող ուսմունքների եւ գիտութիւնների կարգայնութեան աստիճանին: Նման թերահաւատութեան պատճառը գուցէ այն է, որ առաքինութիւնը սովորաբար ընկալում է իբրեւ սոսկական բառակապակցութիւն,

³² ՂԵՒՈՆԴ Ա.ԼԻՇԱՆ, Երկեր, Երեւան, 1981, էջ 191:

անուն, երեւակայութեան տուրք, որը յատուկ կրթութիւն չի պահանջում: Տեղին է մէջբերել Պլուտարքոսի հետեւեալ միտքը. «Առանց սովորելու անկարելի է առաքինութեան մէջ կըրթուել»: Ալիշանը առաքինութեան մասին իր փիլիսոփայական եւ բարոյագիտական ըմբռնումները եւ պատկերացումները համոզիչ դարձնելու նպատակով փորձում է զրանք ձեւակերպել՝ վկայակոչելով անցեալի նշանաւոր մարդկանց կեանքի դրական օրինակները ու վարքագրութիւնները: Այսպէս, նա յիշատակում է Վաղարշակին, Վրթանէսին, Ներսէսին, Սահակին, Ղեւոնդին, Վարդանին եւ այլոց, Հռոմի կայսրերից յիշում է Տիտոսի, Տրայանոսի, Ալեքիլանոսի եւ այլոց անունն ու բարքը, ովքեր ապրել ու գործել են տարբեր դարերում եւ իրականութիւններում, մինչդեռ նրանց անունները եւ իրենց մասին եղած յիշողութիւնները դարբերի մշուշում ամփիշտ մնացել են լուսափայլ եւ հոգեկրթիչ, որովհետեւ նրանք ընդամէնը եղել են առաքինի:

Հետեւելով Պլուտարքոսին՝ Ալիշանը առաքինութեան մէջ կրթութիւնը անհրաժեշտ պայման համարում էր. «...հանչնալ անոր ազնուութիւնը, հարկաւորութիւնն ու մեծութիւնը: Այս հանաչմունքը երբոր տիրապէս ու կատարեալ ըլլայ, մարդու միտքը կը հաւանեցնէ եւ հաւանմունքը սիրելի կ'ընէ առաքինութիւնը, որով ինքն իրեն ալ կը սորվի»³³: Անուանի գիտնականը, ելնելով իր փիլիսոփայական ու բարոյագիտական հայեցաբանութիւնից, փորձում է տալ առաքինութեան՝ իբրեւ գիտութեան, հաւասարագոր հասկացութեան սահմանումը. «Թէ որ հարկաւոր են գիտութիւնք մարդու միտքը զարդարելու, առաքինութիւնը հարկաւոր է նոյն գիտութիւնները զարդարելու: Անոնք ամեն ալ մէկ մէկ գեղեցիկ գոյներ են, բայց մէկ բան մը կը պակսի իրենց, որ է լոյս, եւ առաքինութիւնն է այս լոյսը տուողը: Իմաստութիւնը, որ մարդու երջանկութեան օգնականն է, շատ հեղ անոր թշուառութեանը պատճառ է՝ առաքինութեան հետ չմիանալուն համար. շատ ուսմունք գիտէ, բայց չգիտեր տան կառավարութիւն, ոչ ուրիշներու բնութեանը համբերել, ոչ հասարակաց ոգուով վարուիլ, ոչ ինքզինքնը կառավարել»³⁴:

Մրանով, ի հարկէ, չպէտք է սպառուած համարել Հայր Ալիշանի ուսուցչական եւ տեսչական բեղմնաւոր գործունէու-

³³ Ղեւոնդ Ա.ԼԻՇԱՆ, *Նշ. աշխ.*, էջ 125:

³⁴ *Նշ. աշխ.*, էջ 125-127:

թեան լուսարանումը, նրա ծովածալալ ստեղծագործութիւններում սիւռուած մանկավարժական գաղափարների, մտքերի, հիմնահարցերի եւ սկզբունքների գիտատեսական վերլուծաբանութիւնը, քանի որ նրա մանկավարժական հայեացքների ամբողջական համակարգային քննութիւնը, կարծում ենք, նոր ճանապարհ կը բացի նրա վիթխարի մեծութեան ճանաչման նորանոր բացայայտումներում:

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

Sketches about Ghevond Alishan's Scientific and Pedagogical Activity

SHOGHIK VOSKANYAN

(summary)

Ghevond Alishan is one the unique artists of the second half of the 19th century who, through literature, science, and pedagogical activities not only promoted the formation and development of various branch of Armenian art, but also created new ideas in prose, national patriotism and the historical and cultural role and value of Armenian folklore. He became the founder and patriarch of the Armenian literary and art movement and is well noted in the fields of science and literature.

Alishan, was perhaps one of the first, through his literary and artistic skills overcame the deep-rooted principled of medieval classical poetry in Armenian literature and cleared a road for the development of romanticism.

The scientific and literary heritage left by Alishan is very rich. His interests covered many genre as he was known as a poet, literary critic, linguist, bibliographer, critic, botanist specialist I folklore, ethnographer, editor, publisher, translator, teacher and headmaster.

In the literary field Alishan was a poet. Initially he remained adherent to the literary and scientific traditions created by the Mkhitaryans. In the beginning he wrote in graphar. His most important works which aroused a national consciousness were in ashkharabar.

Alishan was a geographer and a member of a variety of European geographical societies. Through these affiliations he became well acquainted with the works of well known scientists of the day including, A. Gumboldt, K. Richter and El. Reklur. He often referenced the topography and travelling notes of these individuals in his works.

In 1886, the French Academy awarded Alishan the Award of the Honorable Legion, as an honorary member. In 1887 he was selected as the honorary member of the Asian Society of Italy, I 1894 he was inducted into the Moscow Archaeological Society, and in 1897 was given the rank of an Honorary Member and Doctor of the Yena Academy of Philosophy.

Alishan had friendly communications and conducted extensive correspondence with scientists of this period. Specifically with the German geographer, theorist in historical geography of the east and professor of the Berlin University, Henry Kipert (1818-1899), Kipert created the atlas "Historical Armenia".

In 1881, in Venice at the Second World Congress of Geographers Alishan presented the scientific report, "Armenian Geography". This report ardently protects the theory of the importance of human societal development due to geographical environment and geopolitics.

In his work "Panoramas", Alishan collected valuable materials relating to Armenian history and geography for over 40 years. The considerable part of the data he collected is found in "Haykarans" (8 volumes). In each volume some thousand articles are included which contain historical, geographical, religious, topographical, geopolitical, zoological and botanical data and documents.

Sadly, much of Alishan's works are not studied today. As a teacher and headmaster Alishan remained in the memories of his contemporaries and school pupils (Murad "Rafaelyan College) only. We believe that the pedagogical insights of Alishan will find a worthy teacher who will not only add and finish his scientific projects but also highlight the patriarch of the Armenian people as is due.

Alishan was a teacher sent by God, he gave to his pupils a national education, filling their thoughts and souls with patriotic and national feelings. Alishan was remembered by his students as a bright individual with a huge persona who made a considerable impact on their formation and moral shape. Most importantly was remembered as the one who gave them national spirit and love of their native land.